«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-521-23.03.2020,15.06.2020-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնել համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպումը և կառավարումը՝ պատասխանատու լիազոր մարմիններին հստակ սահմանելու միջոցով:

Նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) գտնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական ճանապարհային մարմնի) տնօրինության և կառավարման ներքո:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նախագծային աշխատանքներ կատարող կազմակերպությունները և անձինք ավտոմոբիլային ճանապարհների և ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի, դրանց հետ կապված աշխատանքների՝ սահմանված կարգով կազմված նախագծերը համաձայնեցնում են պետական ճանապարհային մարմնի հետ: Համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշման 3-րդ կետի համաձայն սահմանվել են ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական ճանապարհային մարմինները:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ իրավասու մարմինները, կազմակերպությունները և անձինք ոստիկանության համաձայնությամբ կարող են իրականացնել անմիջապես ճանապարհի վրա և դրա մոտ՝ դեպի ճանապարհ մուտք և ելք ունեցող կրպակների, գովազդային վահանակների և այլնի տեղադրումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ համապատասխան պաշտոնատար անձինք ոստիկանության և այլ իրավասու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցնում են ճանապարհային երթևեկության կազմակերպման և տեխնիկական միջոցների տեղադրման նախագծերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ համապատասխան պաշտոնատար անձինք ոստիկանության և այլ իրավասու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցնում են նաև ճանապարհի և դրա ինժեներական կառույցների շինարարության, վերակառուցման և վերանորոգման նախագծերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 1644-Ն որոշման 1-ին կետով հաստատվել է ճանապարհների և դրանց ինժեներական կառույցների նախագծման, կառուցման, վերակառուցման, վերանորոգման ու պահպանման, ինչպես նաև ճանապարհամերձ օբյեկտների տեղաբաշխման ժամանակ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և ճանապարհային աշխատանքների կատարման ժամանակ երթևեկության կազմակերպման սխեմաները ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության հետ համաձայնեցնելու կարգը, որի 4-րդ կետի համաձայն՝ համաձայնեցման համար ՀՀ ոստիկանության կողմից ուսումնասիրվում են նախագծերն ու սխեմաները, տեղերում կատարվում են հետազոտություններ, որոնց արդյունքների մասին կազմվում է եզրակացություն:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ թե՛ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» և թե՛ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքներով հստակ նշված են այն լիազոր, պատասխանատու մարմինները, որոնց հետ պետք է համաձայնեցվեն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում նշված սխեմաները (նախագծերը):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ «լիազոր մարմին» տերմինը վերոնշյալ հիմնավորումների նույն տրամաբանությամբ կիրառվում է այլ օրենքներում, այդ թվում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, ինչով պայմանավորված՝ նպատահարմար չենք համարում սույն հոդվածում պատասխանատու մարնի լրիվ անվանման ամրագրումը:

Հիմք ընդունելով վերագրյալը և միաժամանակ ընդունելով, որ սույն հոդվածը կարիք ունի լրամշակման և որոշակի պարզեցման՝ ՀՀ կառավարությունն առաջարկում է օրենքի 35-րդ հոդվածի 19-րդ կետը շարադրել նոր բովանդակությամբ՝

«19) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և տրանսպորտի բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և կայացնում որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ։»։

Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված օրենսդրական առաջարկի ընդունումը գտնում ենք նպատակահարմար՝ առաջարկվող փոփոխության ներառմամբ։